



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ԷՍԿԻՃԵԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ



Ուրբաթ, 5 Օգոստոսի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը «Արարատ» Տան «Էսկիճեան» թանգարանի տնօրէն Տիար Մարթին Էսկիճեանի ու վարիչ Տիկին Մակի Մանկասարեանի:

Նկատի ունենալով, որ Տիար Մարթին Էսկիճեանի առաջին

այցելութիւնն էր, հանդիպումը առիթ եղաւ Ազգ. Առաջնորդարանի կառոյցին ու աշխատանքի դաշտերու ծանօթացման: Խորհրդակցութեան նիւթ եղաւ նաեւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական մօտալուտ այցելութիւնը: Յարգելի հիւրերը փափաք յայտնեցին, որ եթէ Վեհափառի այցելութեանց ժամանակացոյցին մէջ յարմարութիւն ստեղծուի, ան այցելութիւն մը տայ նաեւ »Էսկիճեան« թանգարան:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքով անդրադարձաւ »Արարատ« Տան ու «Էսկիճեան» թանգարանի գործունեութեան մասին, նշելով, որ այս հաստատութիւնները հոգեհարազատ են Ազգ. Առաջնորդարանին:

PRELATE WELCOMES THE DIRECTORS OF THE ARARAT-ESKIJIAN MUSEUM

On Friday, August 5, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Chairman of the Ararat-Eskijian Museum Mr. Martin Eskijian and Vice-Chair Mrs. Maggie Mangassarian Goschin.

Given that it was Mr. Eskijian's first visit to the Prelacy, he was first familiarized with the departments and endeavors of the Prelacy. During

discussions on the upcoming Pontifical Visit of H.H. Catholicos Aram I, the guests expressed an interest in having His Holiness visit the Eskijian Museum if his schedule permits.

The Prelate commended the directors for their commitment to carrying out the mission of the Eskijian Museum and for their part in preserving our culture through their work at the Museum.